ԱՐՏԵՄ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆԻ ՀԱՅՐԵՆԱՍԻՐԱԿԱՆ ՊՈԵԶԻԱՆ*

Սուսան Միրզոյան

Բանալի բառեր՝ Արտեմ Հարությունյան, Հայաստան, ցեղասպանություն, Արցախ, Շուշի, Բաբելոն, ազատություն, գոյամարտ, պոեզիա, ինքնատիպություն, ազգային կոլորիտ, համամարդկային արժեք:

Արտեմ Հարությունյանը արդի հայ պոեզիայի ականավոր ներկայացուցիչներից է: Հայտնի են նրա «Նշանների երկիր», «Տեսադաշտ», «Շեմ», ,Ներկայության խոսքեր», «Նամակ Նոյին», «Հուդայի արծակուրդը», «Հեռուստապեմներ «Շուշի» և «Բաբելոն» հյուրանոցների աշտարակից» բանաստեղծական ժողովածուները: Վերընթերցելով այդ ժողովածուները՝ կրկին ու կրկին համոզվում ես, որ նա արդի հայ քնարերգության գերաստղերից է, որն արդեն նկատելի է համամարդկային մշակույթի աստղազարդ երկնակամարում:

Պատահական չէր, որ մեր պոեզիայի դասականներից Գ.Էմինը ժամանակին նկատել է. «Արտեմ Հարությունյանն ապագայի բանաստեղծ է, ինչպես Չարենցը 20-րդ դարի հայ պոեզիայում»: Ամերիկահայ բանաստեղծ Փիտեր Բալաքյանը գոհունակությամբ ընդգծում է. «Ա.Հարությունյանը դուրս է բերում հայ պոեզիան ազգային նեղ սահմաններից դեպի համաշխարհային ընթերցող», իսկ ամերիկացի բանաստեղծ Հեյդն Գերութը հաստատում է, որ Ա.Հարությունյանի պոեզիան «հզոր է, կենսական, վառ և խորապես նշանակալից, նրա «Նամակ Նոյին» գիրքը հոյակապ է, այն հավերժորեն ահագնացող է, ահազանգող»:

Կարելի է ավելացնել նշանավոր այն մարդկանց անունները, ովքեր, ըստ էության, բարձր են գնահատել Հարությունյանի պոեզիան:

2015թ.լույս տեսավ հռչակավոր բանաստեղծի «Հատընտիրը»: Նրա առաջին բաժնում զետեղված են գործեր «Նշանների երկիր» գրքից: Բերված շարքի մեջ ներկայանում է երիտասարդ բանաստեղծն իր պոետական կենսակերպով ու կենսադիրքով: Երևում է հասուն արվեստագետն ու քաղաքացին իր ծրագրերի ու անելիքների հայեցակետով ու դիրքորոշմամբ, որն զգում է ճակատագրի ծանր խաչը կրելու պատասխանատվությունը: Նրա բանաստեղծական հյուսվածքներում զգացվում է մի կողմից՝ արևաշող լավատեսությունը, մյուս կողմից՝ կոշտ, նյութականացած առօրյայի համատեղումն այդ լավատեսությանը: Նրա պոետական հայացքը շիտակ է, հաստատում է բարին ու գեղեցիկը, թևածում է ազատ երևակայությունը: Նրա նշանների խառնարանում ընդգծվում են Հայոց աշխարհի դարավոր շերտերը, համեմվում Հայրենիքի և որդու ապրեցնող զրույցով, որի շնորհիվ.

Օդը շնչում է և դառնում ընկեր...

Մենություն չկա, միայն արթնացում... [1]

Ա.Հարությունյանի հոգևոր արթնացումն ակունքվում է Հայրենիքի մայրական սիրուց ու փարվում մայր-հայրենիքին, ասել է թե՝ մայր ու որդի գտնում են իրար: Ալիքվում է սերը ինչպես այգաբաց ու դառնում երգ-խոստովանություն.

Սուրբ է ժամանակն այս վայրում,

Որտեղ քարը վարդի հետ է ապրում: [2]

---

* Հոդվածն ընդունվել 29.01.17:

Հոդվածը տպագրության է երաշխավորել բ.գ.դ.,պրոֆեսոր Ս.Խանյանը:

«Հատընտիր»-ի երկրորդ շարքը բերված է բանաստեղծի «Տեսադաշտ» գրքից, որը խորհրդանշում է նրա հասունացման նոր, նկատելի աստիճանը: Ներկայացվում է խոսքարվեստի մի նոր գոբելեն՝ պատկերների բազմազանությամբ, տաղաչափական ձևերի, կոմպոզիցիոն միջոցների ներառմամբ: «Տեսադաշտը» հայոց բանաստեղծության մի նոր արտահայտություն է՝ ազգային ոգու համամարդկային հնչեղությամբ: Այդ շարքի մեջ ևս Ա.Հարությունյանի գեղագիտական մտորումների ու հասկացությունների կենտրոնում հասարակական մարդն է՝ միշտ առկա բանաստեղծի բնափիլիսոփայության առանցքում: Ինչպես աշխարհահռչակ Մարտիրոս Սարյանի կտավներում, այնպես էլ Ա.Հարությունյանի հյուսվածքներում, Հայոց աշխարհն է բազմերանգ, Հայոց հողը արևահունց, հայոց ճակատագիրը՝ դաժան, լուսառաք: Դա պոետական մի աշխարհ է, որտեղ «ծառերը բացվում են հովանոցի պես», «հողը մայրանում է... դառնում ընկեր», «անտառը սահում է լույսին ընդառաջ», ուր ամեն ինչ ծփում է, ինչպես «հավերժական սկիզբ», որի սլացքի մոտ կանգնում է բանաստեղծը և շշնջում.

Հավերժական սկիզբ,
Ես մասնակիցն եմ քո օդի,
Քո սկզբնավորման բարձր ծառերի,
Որոնց կատարից ներքև հոսող լույսը
Ջգտում է անվերջ մաքրության:[3]

Հաճելին նաև այն էր, որ «Տեսադաշտը» դարձավ գրական ասուլիսների կարևոր թեմաներից մեկը, թարգմանվեց ռուսերեն՝ արժանանալով ռուս ընթերցողների ու գրաքննադատների բարձր գնահատականին:

«Տեսադաշտին» հաջորդեց «Շեմ» ժողովածուն: Այն մի նոր մրգահասի նախադուռ է, բնության առեղծվածների նոր բացահայտում, հայրենի հողի արևափայլ լեզվի ցուցադրում, խոհափիլիսոփայական ընդգրկումների թարմություն: Ժողովածուն աչքի է ընկնում նոր թեմաների լուսաբանմամբ, պատկերավորության բազմազան ձևերի օգտագործմամբ: «Հատընտիր»-ի «Շեմ» շարքը բացվում է «Բաբելոն հյուրանոցի տեսիլքը» պոեմով: Այն երևույթ է հետխորհրդային շրջանի հայ պոեզիայում: Նրանում ընդգծված երևում են Անգլիայի անցյալի և ներկայի առնչությունները, մարդկությանը հուզող կարևոր հարցեր, առանձնապես Հայոց ցեղասպանությունը Օսմանյան Թուրքիայում 1915-1923 թվականներին:

«Հատընտիր»-ի հաջորդ բաժինը լրացված է բանաստեղծի «Ներկայության խոսքեր»շարքով: Այն բացվում է «Դեյր Զոր» պոեմով: Նրանում զգացվում է հայ ժողովրդի ցավի ճիչը, ցաստումը Թուրքիայի հայակեր կառավարիչների դեմ, որը հնչում է որպես վրիժառության աններում կոչ: Տեսիլքային պատկերների ծանրության տակ չի ընկրկում բանաստեղծը, խոսքը դարձնում է հրաման, գաղափարը՝ մարտական խորհուրդ:

Հայ ժողովրդի միասնության գաղափարի ջերմացնող հյուսվածք է շարքի «Ավետարանոց» բանաստեղծությունը: Արցախի հինավուրց մելիքանիստ այդ գյուղը ներկայացվում է որպես «թռչող Սարահարթ», «Մաշտոցյան խոսքի» ջահակիր, «ինչպես մի ամպրոպ թափանցիկ, որ անձրևում է տաք կարոտ և գոռում՝ Հայաստան, Հայաստան»:

Ուշագրավ երևույթ է շարքի «Մարդկային ցեղի դեղնող, հանց աշուն մենախոսությունը» ստեղծագործությունը: Այն նոր խոսք է ժամանակակից հայ պոեզիայի պատմության մեջ՝ թեմատիկ-գաղափարական և գեղարվեստական ձևի առումներով: Բանաստեղծի տեսադաշտն այստեղ հորիզոններ է ընդգրկում, առավել ևս, որ հեղինակը, որպես քնարական հերոս, մարտնչում է չարիքի դեմ, հաստատում բարին: Նա աշխարհը տեսնում է նոր վերափոխումների, Աստծո ծիրից դուրս եկած մարդկանց ճշմարիտ նկարագրով.

Աշխարհը տոնածված է բացակա
մարդկանց կամքով...
Պետությունը հսկում է հսկա բանակով,
որ այդ կպչուկը չքանդվի... : [4]

Ցավալին, ըստ բանաստեղծի, նաև այն է, որ «անհնար է բողոքել հիմա», մարդիկ ձևացնում են, թե ախտ չունեն, ձևացնում են, թե չեն զննում քաղցածի հայացքով «ցուցափեղկի խորքում մարմրող ապուխտը», իսկ «դահիճները դատարկվում են ճառերի ժամանակ»: Այսպես՝ ստեղծագործության մեջ ներկայացվում են հասարակության տարբեր խավերի բողոքի ձայները, որը նույնպես կարելի է համարել նորություն հետխորհրդային պոեզիայում:

«Հատընտիր»-ի առանցքային բաժիններից է «Նամակ Նոյին» շարքը, որ ընտրված է նույնանուն գրքից: Այն բացվում է «Զգուշացում» հյուսվածքով: Հավատարիմ ստեղծագործական իր խառնվածքին՝ Հարությունյանը տագնապ է բարձրացնում, որ վտանգված է աշխարհը, վտանգված են մարդիկ: Ամենուրեք արյուն է, արևաշաղախ են ճամփաները, շարունակվում են ցեղասպանությունները, որ սկիզբ են առել Դեր-Զորից և հասել.

Շուշի,
Խնուսից՝ Բիթլիս,
Բիթլիսից՝ Սումգայիթ՛...
Մեր բախտն ուրիշ էր,
օրը ցերեկով,
մեր հինավուրց հողերի վրա,
մենք սայթաքում էինք հենց մեր սեփական
արյան վրա: [5]

Հայ ժողովրդի Արցախյան ազգային-ազատագրական պայքարի գեղարվեստական խոտան մի պատկեր է «Պարետային ժամ Ստեփանակերտում» բանաստեղծությունը: Նրանում ևս փայլատակում են Հարությունյանի քաղաքական երգիծանքն ու պատկերավոր մտածողությունը:

Խորհրդային տարիներին ազգային հարցի անարդարացի քաղաքականության ամենազազրելի դրսևորումը բանաստեղծը համարում է Հայոց Արցախի հանձնումը Ադրբեջան կոչվող հանրապետությանը:

Ա.Հարությունյանը Արցախյան գոյամարտի տարիներին բազմիցս է այցելել իր պապերի երկիր: Տեսածի վավերագրական պատկերներից է «Պարետային ժամ...», որտեղ նշվում է.

Բանտամերձ պատերի վրա՝ եղունգի
և դաշույնի հետքեր,
իսկ տանջվածի արյունը շտապ չորացրել են
քաղաքական աղոթքի հաշվենկատ շնչով: [6]

Շարքի մեկը մյուսին լրացնող «Փշրված մենախոսություն», «Հարված», «Ամենօրյա ցայգեր», «Երկրաշարժը Լենինականում» բանաստեղծություններին հաջորդում է. «Նամակ Նոյին կամ հույսի ահագնացում» պոեմը:

Նախաբանից և ինը մասից բաղկացած այդ պոեմն սկսվում է տեսիլքային պատկերով: Հանդիպում են Նոյ նահապետն ու հայ բանաստեղծը: Զրույցն ընթանում է աշխարհի մասին՝ ներառելով Հայաստանն ու Արցախը, որը 1988-ին ոտքի է ելել թոթափելու Ադրբեջանի հայահալած լուծը:

«Նամակ Նոյին» պոեմը, ամենայն իրավամբ, նորություն է: Պոեմի և՛ մտահղացու-

մը, և՛ գաղափարը, և՛ գեղարվեստական երանգները պատիվ կարող են բերել յուրաքանչյուր ականավոր բանաստեղծի: 20-րդ դարի քաղաքական խմորումները, մարդատյացության եռքը, խոշոր պետությունների արհամարհական վերաբերմունքը փոքր ժողովուրդների հանդեպ վառ գույներով են բացահայտված պոեմում: Առավել ցավալի է անտարբերությունը հայ ժողովրդի հանդեպ, որի մասին բարձրաձայնում է բանաստեղծը.

...Թող Նոյը իմանա, թե ում էր փրկում
և Ստամբուլ մտնի շքեղ առևտրի համար,
Բայց նախքան այցը թող տեսնի
հայերի ոսկորների ֆոսֆորը Դեր-Զորում
և մյուս ցեղասպան անապատներում,
Թող թերթ առնի և կարդա Արցախի մասին,
Թող մտնի դեղատուն, և սարսափը մեղմող դեղ առնի...:[7]

Բանաստեղծը բողոքում է անարդարությունների դեմ, իրեն համարում մարդկության մի մասնիկը՝ իր ժողովրդի դիմագծով ու ճակատագրի խարանով: Թեմատիկ-գաղափարական հիմքով ու գեղարվեստական լուծումներով «Նամակ Նոյին» պոեմը գրված է բոլոր ժամանակների համար:

«Նամակ Նոյին» պոեմից հետո Ա.Հարությունյանը դարերին հանձնեց «Հուդայի արձակուրդը» երկը: «Հատընտիր»-ը կազմողները ամբողջությամբ տեղադրել են այդ պոեմը: Բանաստեղծը թարմ ու աննախադեպ պատկերներով ներկայացնում է Հայաստանի նորօրյա գործընթացը՝ աշխարհում տեղի ունեցող խոշոր իրադարձությունների համապատկերի վրա: Դա մի ժամանակաշրջան էր, երբ «տղերքը» դարձան նախագահ ու նախարարներ: Այդ նրանք էին, որ անհեռատեսորեն փակեցին «Ատոմայինը» և «Նաիրիտը», որին հաջորդեցին հովհարային անջատումները, լույսից զրկվելը և այլ տհաճ երևույթներ: Կոնկրետ համոզիչ պատկերներով բանաստեղծը համոզում է, որ Հուդան մենակ չէ, նրան շրջապատում են պետական անարժան այրերը: Պոեմը զետեղվել էր նաև նույնանուն ժողովածուում, որի մասին իր արժեքավոր խոսքն ասաց Ալեքսանդր Թոփչյանը. «Հուդայի արձակուրդը» մեզ ներկայացնում է քաղաքակիրթ բանաստեղծի մի նոր տիպար, որը, պաշարման վիճակից դուրս գալով, անցել է կատաղի հարձակման, մանավանդ, որ թիրախներն էլ շատացել են, նախկին երկուսին ավելացել են հայրենական ավազակները՝ «ջիբածինները», ինչպես ինքն է բնորոշում: Եվ դժվար է ասել, թե որն է դրանցից ավելի վտանգավոր ու անողոք»:

Ա.Հարությունյանը «Հուդայի արձակուրդը» ժողովածուից հետո մի նոր անակնկալ մատուցեց՝ հանձին «Հեռուստապեմներ «Շուշի» և «Բաբելոն» հյուրանոցների աշտարակից» գրքի:

Ռուս աշխարհահռչակ քննադատ Բելինսկին իր «Գրական երազանքներ» աշխատության մեջ Պուշկինի ստեղծագործության կապակցությամբ գրել է. «Պուշկինի արտասովոր ազդեցությունը բխում էր այն բանից, որ Ռուսաստանի վերաբերմամբ նա իր ժամանակի զավակն էր այս բառի լիակատար իմաստով, նրա մտավոր կյանքի զարգացման ներկայացուցիչն էր, հետևաբար նրա իշխումն օրինական էր» [8]:

Համեմատությունը տեղին է, եթե ընդգծենք, որ Ա.Հարությունյանը էն գլխից է հասկացել, որ բանաստեղծն իր ժամանակի զավակն է, հայրենիքի բանաստեղծ-զինվորյալը, նրա մտավոր կյանքի դրոշակակիրը:

Ընթերցելով «Հատընտիր»-ի շարքը համանուն գրքից՝ կրկին ու կրկին համոզվում ես, որ բանաստեղծ Ա.Հարությունյանը ոչ միայն իր ժողովրդի նվիրյալ զավակն է, այլև նրա կրած տառապանքների ու կորուստների, ակնկալիքների ու վճռականության ար-

տահայտիչը: Նա խարազանում է երիտթուրքերին, զրույց բացում Աստծո հետ՝ հանուն արդարության, պահանջում, որ իրենց պատիժը կրեն Թալեաթը, Օզալը, Էրդողանը, որ Թուրքիան ճանաչի Հայոց ցեղասպանությունը:

Մեր ժողովրդի պատմական ծանր անցյալի ցավն իր սրտում՝ Ա.Հարությունյանը ողջունում է Արցախյան պատերազմի հերոսներին, Շուշիի ազատագրումը և հաստատում հայոց գալիք սերունդների հաղթարշավը կյանքի բոլոր խաչմերուկներում:

Ուսումնասիրելով սույն «Հատընտիր»-ը՝ ոչ միայն ըմբռնում ես ականավոր բանաստեղծի բարձրարվեստ պոեզիան, այլև ծանոթանում ես համաշխարհային արդի գրականության մեջ տեղի ունեցող վերափոխումներին և հաստատում մի ճշմարտություն, որ թևածում է այն պոեզիան, որը ճեղքում է ազգայինի նեղ սահմանները և ձեռք բերում համամարդկայինի արժեք: Այս առինքնող պահանջի աներկբա վկայություններից է Ա.Հարությունյանի «Հատընտիր»-ը:

ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. Հարությունյան Ա., «Հատընտիր», Եր., 2015, էջ 17:
2. Նույն տեղում՝ էջ 13:
3. Նույն տեղում՝ էջ 71:
4. Նույն տեղում՝ էջ 71:
5. Նույն տեղում՝ էջ 162:
6. Նույն տեղում՝ էջ 164:
7. Նույն տեղում՝ էջ 183:
8. Բելինսկի Վ. Ընտիր երկեր. Եր., 1948, էջ 51:

ԱՄՓՈՓԱԳԻՐ

Արտեմ Հարությունյանի հայրենասիրական պոեզիան

Սուսան Միրզոյան

Սույն հոդվածում վերլուծվում ու գնահատվում է արդի հայ պոեզիայի ականավոր ներկայացուցիչներից մեկի՝ Արտեմ Հարությունյանի հայրենասիրական պոեզիան: Նշվում է, որ Ա. Հարությունյանի հայրենապատումը լայն ընդգրկումներ ունի ազատ չափածոյի /վերլիբր/ ընձեռած սահմաններում:

Նա պատկերների թարմ հյուսվածքներով ներկայացնում է հայ ժողովրդի հերոսական անցյալը, ցավով ու ցասումով պատկերում Հայոց ցեղասպանությունը Արևմտյան Հայաստանում 1915-1923թթ., ոգևորությամբ հյուսում Արցախյան պատերազմի ազգափրկիչ տարեգրությունը: Ա. Հարությունյանի պոեզիան, ըստ էության, համարվում է նոր երևույթ հայ քնարերգության դարավոր, հարուստ գանձարանում:

РЕЗЮМЕ
Патриотическая поэзия Артема Арутюняна
Сусан Мирзоян

Ключевые слова: *Артём Арутюнян, Армения, Геноцид, Карабах, Шуши, Вавилон, свобода, война, поэзия, оригинальность и национальный колорит, универсальное значение.*

В данной статье дается анализ и оценка патриотической поэзии одного из видных поэтов-современников Артема Аруюняна. Отмечается, что данная тематика раскрывается большей частью за счет свободного стиха (верлибра).

Используя свежую систему образов, он представляет героическое прошлое армянского народа, с болью и гневом изображает Геноцид армян в Западной Армении в 1915-1923 гг., с энтузиазмом вплетает национально-освободительную тематику в хронику Арцахской войны. Поэзия А. Арутюняна по сути представляет собой новое явление в богатой сокровищнице армянской поэзии.

SUMMARY
The Patriotic poetry of Artem Harutyunyan
Susan Mirzoyan

Key words: *Artem Harutyunyan, Armenia, the Genocide, Karabakh, Shushi, Babylon, freedom, war, poetry, originality and national color, universal meaning.*

This article analyzes and evaluates the patriotic poetry of one of the prominent contemporary poets Artem Harutyunyan. It is noted that this topic is mainly revealed due to free verse.

Using a fresh system of images, he represents the heroic past of the Armenian people, with pain and anger depicts the Armenian Genocide in Western Armenia in 1915-1923, enthusiastically flies national liberation themes into the chronicle of the Artsakh war. A. Harutyunyan's poetry is, in fact, a new phenomenon in the rich treasury of Armenian poetry.